14808

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 10 » 11 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ № 0200-23

***Ձեռնարկողը՝*** ***«ԱՎԱՋ-1» ՍՊԸ***
*Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Նավասարդյան փ., 6*

***Գործունեությունը՝*** ***Արմավիրի մարզի Գետաշենի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*Արմավիրի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 0200-23**

**< 10 > Նոյեմբերի 2023թ.**

**Արմավիրի մարզի Գետաշենի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «ԱՎԱԶ-1» ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք Գետաշեն բնակավայր |

**Ներածական մաս** Գետաշենի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Արևելյան տեղամասը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրի վարչական տարածքում, Արաքս գետի ձախ ափին, ՀՀ պետական սահմանի հարևանությամբ, ընդգրկում է Արաքս գետի ավազանն ու զբաղեցնում է 31.02հա տարածք:

Մոտակա բնակավայրերն են Գետաշեն, Բերքաշատ, Շենավան և Նոր Կեսարիա բնակավայրերը:

Հայցվող արևելյան տեղամասի տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն «Խիճ շինարարական աշխատանքների համար» 8268-82, «Խիճ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար 23845-86, «Խիճ կոպճից շինարարական աշխատանքների համար 10260-82 և ավազի «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ГОСТ-երի տեխնիկական պահանջներին:

ՀՀ ՍՏԱՑԱԿԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
РА ЕРЕВАН ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հայցվող 31.02հա տարածքի կոորդինատները ներկայացվում են ստորև (ըստ Arm WGS-84 կոորդինատային համակարգի).

1. X=8408554.60 Y=4433024.61
2. X=8409670.56 Y=4432868.71
3. X=8409244.66 Y=4433012.62
4. X=8409279.75 Y=4433084.75
5. X=8409312.73 Y=4433145.95
6. X=8409303.23 Y=4433162.38
7. X=8409285.40 Y=4433170.63
8. X=8409249.46 Y=4433189.27
9. X=8409236.69 Y=4433200.45
10. X=8409208.74 Y=4433235.32
11. X=8409144.62 Y=4433333.70
12. X=8409080.71 Y=4433367.87
13. X=8409022.01 Y=4433417.93
14. X=8409006.62 Y=4433448.04
15. X=8408960.18 Y=4433459.79
16. X=8408956.05 Y=4433462.98
17. X=8408949.00 Y=4433477.89
18. X=8408883.85 Y=4433495.06
19. X=8408812.85 Y=4433504.51
20. X=8408755.91 Y=4433433.61
21. X=8408690.60 Y=4433400.64
22. X=8408629.67 Y=4433336.95
23. X=8408583.46 Y=4433235.82
24. X=8408542.80 Y=4433201.41
25. X=8408534.54 Y=4433101.20
26. X=8408545.06 Y=4433101.80

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 16 հորատանցք՝ 10.5-11.0մ խորությամբ, 170.6մ ընդհանուր ծավալով:

Հորատումը կիրականացվի ԿԱՄԱԶ 701404 УРБ-2А2 հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով:

Օգտակար հանածոյի հորատհանուկի գծային ելքը պետք է կազմի 98%:

Նախատեսվում է անցնել 3.5մ խորության 9 հետախուզահոր: Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 54մ$^2$(յուրաքանչյուր հորինը 6մ$^2$):

Հետախուզահորերի ծավալը կկազմի՝ 31.5 գծ.մ, կամ 189.0մ$^3$:

Դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար հետախուզահորերի անցմանը զուգընթաց նախատեսվում է դաշտային պայմաններում որոշել կուտակի ծավալային և ծավալալիրքային զանգվածների, ինչպես նաև փխրեցման գործակիցը:

ԱԿԽ կուտակի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերը և հետախուզահորերը ենթարկել նմուշարկման: Նախատեսվում է վերցնել 41 նմուշ, այդ թվում 32 հանուկային և 9 ակոսային:

Յուրաքանչյուր հորատանցքից նախատեսվում է վերցնել 2 հանուկային նմուշ, յուրաքանչյուրը՝ միջինը 5.2 երկարությամբ:

Նախատեսվում է հետախուզահորերից վերցնել 1-ական նմուշ, ընդամենը՝ 9 նմուշ:

Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյին ուղղահայաց և ամբողջ հզորությամբ:

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Քիմիական և միներալոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է համապատասխանաբար վերցնել 4-ական նմուշ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆՉԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական փորձարկումներ, քիմիական և միներոլապետրոգրաֆիական ուսումնասիրություններ:

Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման:

Հանուկային նմուշները համարակալվում և դասավորվում են հատուկ արկղներում, ապա ուղարկվում լաբորատորիա լրիվ ծրագրով ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Ակոսային նմուշների մշակումը կկատարվի հետևյալ կերպ՝ նմուշարկված ամբողջ ԱԿԽ-ի կուտակը կլցվի բրեզենտե փռվածքի վրա, կխառնվի և միանգամյա կրճատման միջոցով կհասցվի 15կգ, որը և կկազմի շարքային նմուշի նյութը: Վերջինս կլցվի առանձին պարկերի մեջ, կպիտակավորվի և նոր միայն կուղարկվի լաբորատորիա լրիվ ծրագրով ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ՝ ջրաբեր հորիզոնների և գեոդինամիկ երևույթների առկայությունը պարզաբանելու համար:

Տեղամասի տարածքում և անցած հետախուզական փորվածքներում СРП–68-01 (N596) ռադիոչափիչ սարքով նախատեսվում է չափել ավազակոպճային կուտակի ռադիոակտիվությունը:

Կկառուցվի 16 հորատման հրապարակ, յուրաքանչյուրը 35մ$^2$ մակերեսով: Ընդհանուր մակերեսը կկազմի՝ 16x35= 560.0մ$^2$

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը տեղամասում կազմում է՝ 614մ$^2$, այդ թվում հորատհրապարակներ՝ 560մ$^2$, հետախուզահորեր՝ 54մ$^2$: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 219286 ՀՀ դրամ:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

-նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում(բացօթյա, կամ ծածկի տակ պահեստ), ինչին տրվում է համապատասխան թեքություն, ինչն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

-Փոշենստեցման նպատակով ճանապարհների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

-Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:

-Արաքս գետի ջրերի վրա ազդեցությունների բացառում, աշխատանքների դադարեցում, գետի վարարման շրջանում:

-Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 35լ տարողությամբ), ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխում մոտակա աղբավայր: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ կկնքվի պայմանագիր:

## ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձաքննական գործընթացում ստացվել է կարծիք, համաձայն ինչի՝ ներկայացված կոորդինատներով հայցվող տարածքը (մակերեսը՝ 31.02հա) հարում է ՀՀ պետական սահմանի վրա տեղակայված ինժեներատեխնիկական կառույցներին և նախատեսվող գործունեությունը հետագայում կարող է բացասական ազդեցություն ունենալ ՀՀ պետական սահմանի պահպանության վրա:

Ելնելով վերոգրյալից «Ավազ-1» ՍՊԸ-ի կողմից հայցվող տարածքում նախատեսվող աշխատանքների իրականացումը նպատակահարմար չէ:

Ստացվել է կարծիք նաև, որ հայցվող տարածքում հանդիպում են կենդանիների Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- Բզակտուց (Recurvirostra avosetta)՝ կարգավիճակը Հայաստանում խիստ հազվագյուտ, սակավաթիվ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:
- Սովորական ֆլամինգո (Phoenicopterus roseus Pallas)՝ կարգավիճակը անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

Վերոնշյալ տեսակների, դրանց պահպանության միջոցառումների վերաբերյալ, ընկերությունը նախնական գնահատման հայտում տեղեկատվություն չի ներկայացրել:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի, նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արմավիրի մարզպետարանը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլերում, Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի Գետաշեն բնակավայրում անցկացվել է հանրային քննարկում:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արմավիրի մարզի Գետաշենի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան